ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հաշվետվություն

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի և մոնիթորինգի վարչության փորձագետի աշխատանքների

(հաշվետու ժամանակահատված՝ 11.08.2023թ.-11.10.2023 թ.)

Հարգելի՛ տիկին Հարությունյան,

2023 թվականի օգոստոսի 11-ից մինչև 2023 թվականի հոկտեմբերի 11-ը, որպես Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի և մոնիթորինգի վարչության (այսուհետ՝ Վարչություն) փորձագետ, իրականացրել եմ հետևյալ աշխատանքները՝

1. «Փրոջեքթ Հարմոնի» հայաստանյան գրասենյակի կողմից 14-16 տարեկանների շրջանում Աղվերանում անցկացվելիք անգլալեզու ճամբարների համար կոռուպցիայի կանխարգելման թեմայով նյութի մշակում և դրանց իրականացման համար ուսումնաօժանդակ նյութերի կազմում.
2. Աղվերանում կայացած անգլալեզու ճամբարներում շուրջ 100 երիտասարդների համար կոռուպցիայի կանխարգելման թեմայով դասընթացի անցկացում.
3. «Փաբլիսիս Արմենիա» ընկերության կողմից ներկայացված հաղորդակցության ռազմավարության ուսումնասիրություն, առաջարկների ներկայացում.
4. ԳՐԵԿՈ-ի հինգերորդ փուլի գնահատման զեկույցի ուսումնասիրություն՝ Վարչությանը վերաբերելի մասով դիտարկումներ ներկայացնելու նպատակով.
5. Օգոստոսի 23-ին Արդարաատության նախարարության կողմից կազմակերպված «Հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծի վերաբերյալ հանրային

Сканировано с CamScanner

քննարկմանը մասնակցություն և քննարկման ընթացքում Հանձնաժողովի դիտարկումների ներկայացում.

6. Արդարադատության նախարարության կողմից օգոստոսի 23-24-ը կազմակերպված «Հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծի վերաբերյալ հանրային քննարկման վերաբերյալ հրապարակման նյութի մշակում՝ հիմք ընդունելով նաև մյուս վարչությունների տրամադրած նյութերը.
7. Սեպտեմբերի 27-ից սեպտեմբերի 5-ը մանկավարժների և ծնողների շրջանում «Մանկավարժների և ծնողների դերը կոռուպցիայի կանխարգելման գործում» խորագրով իրազեկման արշավների անցկացում, որին մասնակցել են շուրջ 100 մասնակիցներ Երևանի 24 դպրոցներից.
8. Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի վերաբերյալ հարցազրույցի հարցերի պատասխանների մշակում.
9. ԵՄ Թվինինգ ծրագրի 1.3 ենթաբաղադրիչի փորձագետների մշակած ձեռնարկների ուսումնասիրում և կարծիքի տրամադրում.
10. ԵՄ Թվինինգ ծրագրի 1.4 ենթաբաղադրիչի շրջանակներում սեպտեմբերի 04-08-ը կայացած առաքելության առցանց մասնակցություն.
11. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 4-ամյակին նվիրված հոլովակի տեխնիկական բնութագրի նախագծի մշակում.
12. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 4-ամյակին նվիրված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձեռքբերումները և մարտահրավերները» թեմայով համաժողովի օրակարգի նախագծի մշակում.
13. «Կոռուպցիայի կանխարգելում» թեմայով մոդուլի ներածական մասի նախագծի մշակում.
14. Մասնակցություն ԵՄ Թվինինգ ծրագրի 1.2 ենթաբաղադրիչի շրջանակներում հասարակագիտության ուսուցիչների համար կազմակերպված և հոկտեմբերի 10-11-ը կայացած վերապատրաստումներին.
15. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 4-ամյակի շրջանակներում նկարահանվող տեսանյութում նկարահանվելու առաջարկով միջազգային գործընկեր կազմակերպություններին ուղարկվելիք գրության թարգմանություն.
16. Սեպտեմբերի 6-ին կայացած Բաց կառավարման գործընկերության գագաթնաժողովի վերաբերյալ հրապարակման նյութ պատրաստելու

Сканировано с CamScanner

նպատակով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահ Հայկուհի Հարությունյանի ելույթի թարգմանության իրականացում:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի
Կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի
և մոնիթորինգի վարչության փորձագետ՝ Լ. Մաթևոսյան

11.10.2023 թ.

Сканировано с CamScanner

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

(ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ՝ 11.08.2023Թ.-11.10.2023 Թ.)

Հանձնաժողովի կրթական հանրային իրազեկվածության և մոնիթորինգի վարչության փորձագետ Լիլիթ Մաթևոսյանի կողմից 2023 թվականի օգոստոսի 11-ից մինչև հոկտեմբերի 11-ը իրականացրած աշխատանքները՝ ըստ ամփոփիչ փուլի արդյունքների գնահատվում է.

1. Բավարար
2. Լավ
3. Գերազանց ✓

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահ
Հայկուհի Հարությունյան

(ստորագրություն)

11.10.2023 թ.